

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ*

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ Լեզվի կոմիտեի նախագահ

gyurjidav@mail.ru

DOI: 10.52853/18294073-2021.3.27-217

ՀՐԵԱՆԵՐԻ ԼԵԶՎԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ լեզվանուն, սեմական լեզուներ, եբրայեցերեն / եբրայերեն, հրեարեն/ հրեերեն, ուղղագրական տարբերակներ, բառարանագրական ավանդույթ, կանոնարկում, գրաբար:

Ներածություն

Հայերենում հրեաների լեզուն անվանելու համար V–XX դարերում կազմվել են տարահիմք մի շարք բառեր, որոնք ունեն բառակազմական, ուղղագրական տարբերակներ: Բառակազմական հիմք են դարձել ազգ, ժողովուրդ նշանակող եբրայեցի, հրեայ (հրեա), ջիուդ բառերը, իվրիտ և իդիշ լեզվանունները, որոնց ավելացել են «լեզու» նշանակող –երէն / -արէն ածանցները: Հրեաների լեզվի հայերեն անուններն են (ավանդական և նոր ուղղագրությամբ)՝ եբրայեցերէն (եբրայեցերեն), եբրայերէն (եբրայերեն), հրեարէն (հրեարեն), հրէերէն (հրեերեն), հրէայերէն / հրեայերեն, հազվադեպ կազմություններ՝ ջիուդերեն, իվրիտերեն և իդիշերեն, նաև սխալագրություններ՝ հրէերէն, հրեաերեն, եբրաերեն և այլն:

Հրեաների լեզվի հայերեն անունները և նրանց տարբերակները ներառվել են հայոց լեզվի տարատեսակ բառարանների բառացանկեր: Պարզենք, թե դրանցից որո՞նք և ինչպե՞ս են ներկայացվել բառարաններում, բառարանային ինչպիսի՞ մշակման են ենթարկվել, ի՞նչ խնդիրներ և անելիքներ կան այդ հարցում:

* Հոդվածը ներկայացվել է 24.05.21, գրախոսվել է 18.08.21, ընդունվել է տպագրության 19.11.21:

Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների...

Հարցը կքննենք ըստ բառարանների տեսակների՝ միալեզվյան և թարգմանական:

Միալեզվյան բառարաններ

Նախ անդրադառնանք բացատրական բառարաններին՝ ուշադրություն դարձնելով, թե ո՞ր տարբերակներն են գլխաբառ դարձել, խոսքիմասային ի՞նչ արժեքներով և իմաստներով, ինչպիսի՞ գուգակցումներով և հղումներով են ներկայացվել:

Մխիթար Սեբաստացու Հայկազյան բառարանում մակբայի («որակական մակբայի») արժեքով տրված են հրէարեն և հրէերեն (-երեն ածանցը՝ է-երով, որ վրիպակ է) տարբերակները, «լեզուաւ կամ բարբառով հրէի» բացատրությամբ և սուրբգրային հղումներով¹: Աբբահայրը նշում է, որ այս բառերը երբեմն նշանակում են նաև «հրեաբար», այսինքն՝ ըստ հրեաների կերպի և սովորության: Բառարանում ներառված չէ եբրայեցերէն-ը:

Եբրայեցերէն բառը մակբայի արժեքով արձանագրվել է Նոր հայկազյան բառարանում՝ «Եբրայեցոց լեզուաւ կամ գրով» բացատրությամբ, հունարեն և լատիներեն թարգմանությամբ՝ 'Εβραϊστί և Hebraic, բառահոդվածում տրված է նաև հրեարէն-ը՝ որպես մատչելի համարժեք²: Առձեռն բառարանում բառը սեղմ այդպես էլ բացատրվում է՝ «հրէարէն»³:

Նոր հայկազյան բառարանում գրանցված են նաև V դարում վկայված հրէարէն / հրէերէն տարբերակները, որոնք բացատրվում են այսպես՝ «Հրէից լեզուաւ կամ գրով», տրվում են հունարեն ու լատիներեն համարժեքները՝ 'Ιουδαϊστί և Judaice, հայերեն բառակազմական և ուղղագրական տարբերակները⁴: Առանձին բառահոդվածով տրված է սրանց հրէայերէն բառակազմական տարբերակը, բայց հրէարէն-ի հղումով:

Առձեռն բառարանում, ի տարբերություն ՆՀԲ-ի, հրէայ հիմքից կազմված երեք լեզվանուն-գլխաբառ կա՝ հրէայերէն, հրէարէն, հրէերէն⁵, որոնցից երկուսը հղվում են հրէարէն-ին: Սա մակբայի և ածականի արժեք ունի, բացատրվում է «հրէի լեզուով, գրով, օրէնքով» և «հրէի» (այսինքն՝ հրեական):

¹ Մխիթար Սեբաստացի 1749, 559:

² Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան 1836, 645:

³ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի 1865, 256: Հայկազյան բառարաններում բառը ե/է-ի ուղղագրական տարբերությամբ է ներկայացված:

⁴ Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան 1837, 142:

⁵ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի 1865, 513:

Գյուրջինյան Դ.

Դպրոցների համար գրված աշխարհաբար-գրաբար բառարանում Հրէայ բառահոդվածում Հրէայերէն ենթագլխաբառի դիմաց տրված են գրաբար համարվող հրէարէն, եբրայեցերէն⁶ տարբերակները:

Ս. Գաբամաճյանը հետևել է Առձեռն բառարանին. եբրայեցերէն-ը երկարժեք է՝ ածական, մակբայ, բացատրված որպես «հրէարէն», գլխաբառ են դարձել նաև հրէայերէն և հրէերէն տարբերակները՝ հղելով հրէարէն-ին, որի իմաստները տրված են ճիշտ այնպես, ինչպես Առձեռնում է⁷:

Ստ. Մալխասյանցի բառարանում եբրայեցերէն-ը բացատրված է «եբրայեցոց լեզուով», ավելացվել է խոսքիմասային երրորդ արժեքը՝ գոյական, յուրաքանչյուր արժեքի համար բերված են ինքնաշեն նմուշներ, նախորդների նման տրված են հրէայերէն-ը, հրէերէն-ը և հրէարեն-ը⁸: Բացատրվում է միայն վերջին բառը: Առաջին՝ «եբրայեցերէն» իմաստն ունի պայմանական նշան, որ նշանակում է «հին բառ կամ նշանակություն», իսկ երկրորդ իմաստի միջոցով բառի իմաստային կառուցվածքում ուշագրավ տարբերակում է մտցվում՝ «հրեաների այժմյան լեզուն (որ եբրայեցերէն-ից օտար (այսինքն՝ տարբեր – Դ.Գ.) լեզու է)»: Այսպիսով բառարանագիրը եբրայեցերէն-ին հատկացնում է հին լեզուն, իսկ հրեարեն-ին՝ նոր լեզուն անվանելու դեր: Մալխասյանցի ինքնաշեն օրինակներից մեկը այդ մոտեցման արտահայտությունն է. «Հրէարէնը աղճատված գերմաներէն է»: Հետագա բառարանները լեզվանունների բաշխվածության այս մոտեցումը չկիրառեցին (կամ չզարգացրին), թեև հայոց լեզվի բացատրական բառարաններից օգտվողների համար այս լեզվանունների հարցը տակավին մութ է մնում:

Ճիզմեճյան վարդապետի բառարանում եբրայեցերէն-ը միայն գոյական է՝ «հրեաներու լեզու», իսկ հրէայերէն-ը՝ միայն ածական, և Առձեռն բառարանի բացատրությամբ՝ «հրէի լեզուով, գրով, օրէնքով»⁹:

Ներկայացված բառարաններում եբրայեցերէն-ի նույնահիմք տարբերակայնություն չի արձանագրվել, և դա բառի իրական գործածության արտացոլումն էր:

Եբրայեցերեն / եբրայերեն տարբերակայնության առաջին դրսևորումը և եբրայերեն-ի նախընտրելիության արձանագրումը տեսնում ենք ժամանակակից հայերենի ակադեմիական բացատրական բառարանում, որտեղ եբրայե-

⁶ Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ 1869, 324:

⁷ Գաբամաճեան 1910, 398, 847:

⁸ Մալխասյանց 1944, հ. 1, 548, հ. 3, 152:

⁹ Ճիզմեճեան 1957, 204, 888:

Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների...

ցերեն-ից հղվում է եբրայերեն-ին¹⁰: Այս բառարանում հրեա հիմքից կազմված հրեարեն / հրեերեն տարբերակները միևնույն բառահոդվածում են, սակայն հղում է տրված եբրայեցերեն-ին¹¹ (ինչպես տեսանք, վերջինս էլ իր հերթին՝ եբրայերեն-ին): Հաջորդական հղումները բառարանից օգտվողի համար դժվարացնում են բառին և նրա բացատրությանը հասնելու ընթացքը:

Էդ. Աղայանի բառարանում եբրայերեն-ը և եբրայեցերեն-ը միևնույն բառահոդվածի գլխաբառեր են, այսինքն՝ հավասարաթեք են դիտվել: Նույն բառարանում հեղինակը հրեերեն-ից հղում է անում եբրայեցերեն-ին¹², այնինչ եբրայական բառի երկրորդ իմաստը ձևակերպվել է «եբրայերենին հատուկ», այսինքն՝ բառարանագրի խոսքում եբրայերեն-ն է կիրառվել: Սա ակներև է դարձնում եբրայեցերեն / եբրայերեն զուգաձևությունը, և որ հաճախ դժվար է լինում նախապատվություն տալ տարբերակներից մեկին¹³:

Հրեա հիմքով կազմվածներից Էդ. Աղայանի բառարանում գրանցվել են հրեայերեն, հրեաերեն (զետեղված է հրեաոյաց և հրեացնել բառերի միջև. պիտի լիներ հրեարեն) և հրեերեն տարբերակները: Առաջին երկուսը հղվում են հրեերեն-ին, որը երկարժեք է՝ գոյ. / ած., բացատրվում է այսպես՝ «1. գ. Հրեաների ժարգոնը, որ առաջացել է գերմաներենի հիման վրա: 2. Տե՛ս Եբրայեցերեն: 3. ած. Հրեաների լեզվով»¹⁴:

Արևմտահայերենի երկհատոր բացատրական բառարանում տրված է եբրայեցերեն բառը՝ ձևաբանական երեք արժեքով. ած. «եբրայեցերեն գրուած», գոյ. «եբրայեցերեն լեզու», մկբ. «եբրայեցերեն լեզուով», իսկ հրեայ բառահոդվածում՝ գլխաբառի կողքին, առանց բացատրության և խոսքիմասային արժեքը նշելու՝ գրված է հրեայերեն, ինչպես և նույն տեղում՝ եբրայեցի և իսրայելացի բառերի կողքին՝ եբրայեցերեն (փակագծերում՝ եբրայերեն)¹⁵: Բառարանը կազմողներն առաջնորդվել են այս տրամաբանությամբ՝ ժողովրդի անուն – լեզվի անուն: Նկատենք, որ եբրայերեն տարբերակը չկա եբրայեցերեն-ի բա-

¹⁰ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 540:

¹¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974, 395:

¹² Աղայան 1976, 317, 907:

¹³ Բառարանի խմբագրված տարբերակում հրեերեն-ից հղում է արվում արդեն եբրայերեն-ին (Աղայան 2014, 784):

¹⁴ Աղայան 1976, 907: «Ժարգոն» ձևակերպման հետ դժվար է համաձայնել: Հր. Աճառյանը հրեական իդիշ լեզվի մասին գրում է. «... կոչվում է ժարգոն, բայց ոչ այլ ինչ է, եթե ոչ գերմանական մի բարբառ» (Աճառյան 1955, 415):

¹⁵ Ճերեճեան, Տոնիկեան 1992, 524, 1295:

Գլուխիչյան Դ.

ռահողվածում: Համենայն դեպս նշված իրողությունը ևս տարբերակայնության յուրատեսակ արձանագրում է:

«Լեզվաբանական բառարանում» միասին տրված են եբրայերեն, եբրայեցերեն տարբերակային բառերը, որոնք հղվում են հին հրեերեն-ին¹⁶: Այստեղ էլ իբրև տարբերակ բերված է հրեական լեզու բառակապակցությունը¹⁷: Գործածվում է նաև եբրայական լեզու բառակապակցությունը¹⁸:

Ռ. Ղազարյանի գրաբարի բառարանում եբրայեցերեն-ը բացատրվում է ոչ միայն իբրև «եբրայեցիների լեզվով», այլև «եբրայերեն»¹⁹ (սա գործածվել է հայկազյան բառարանների հրեարեն/ հրէարեն-ի փոխարեն): Եբրայեցերեն-ը եբրայերեն-ով բացատրելը հուշում է, որ եբրայերեն տարբերակն է հանրության ընկալելի: Առանձին տրված են հրէայերեն-ը և հրէերեն-ը, որոնք հղվում են հրէարեն-ին: Նշված է հրէարեն-ի երեք իմաստ՝ մկբ. «հրէաների լեզուով կամ գրով», «ըստ հրէաների սովորութեան» և ած. «հրէական»:

Բառային երեք միավորներ են զետեղված հանգաբառարանում՝ եբրայերեն, եբրայեցերեն, հրեերեն²⁰: Սա արևելահայերենում այս տարբերակների գործածության սուկ արձանագրումն է:

Ինչպես տեսանք, XX դարի երկրորդ կեսից, բառարաններում եբրայեցերեն-ի հետ տրվում է նաև նրա կարճ տարբերակը՝ եբրայերեն-ը: Արևելահայերենի անցյալ դարի ուղղագրական-տերմինաբանական ծավալուն բառարանում կան երկու հիմքերից կազմված զույգ տարբերակներ՝ եբրայեցերեն / եբրայերեն և հրեարեն / հրեերեն (այս բառազույգում վերջինս է հանձնարարելի դիտվել)²¹:

Հետաքրքրական է այդ ժամանակի դպրոցական ուղղագրական բառարանի մոտեցումը. եբրայեցի հիմքով տարբերակներն արձանագրվել են հա-

¹⁶ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյույան 1975, 86: Ավելի վաղ նույն մոտեցումն էր կիրառվել հայ-ռուսերեն լեզվաբանական բառարանում (древнееврейский язык թարգմանությամբ), որը լույս է տեսել ձեռագրի իրավունքով (**Հարությունյանց** 1963, 70):

¹⁷ Հմմտ. «Հայերեն նոր, աշխարհաբար գրական լեզվի գործածությունը գրաբարի վերականգնումը չէ, և այդ չի կարելի համեմատել հրեական լեզվի վերականգնման հետ» (**Աճառյան** 1955, 26):

¹⁸ Հմմտ. եբրայագետ = եբրայական (հրեաների) լեզվի մասնագետ (Ղարիբյան, **Պարիս** 1959, 83):

¹⁹ **Ղազարյան** 2000, 385:

²⁰ Հայոց լեզվի հանգաբառարան 1976, 353, 354:

²¹ **Բարսեղյան** 1973, 277, 600:

Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների...

վասարության նշանով՝ եբրայերեն = եբրայեցերեն²²: XXI դարի ուղղագրական բառարանների բառացանկում եբրայեցերեն-ը չկա. տրված են եբրայերեն և հրեերեն անունները²³:

Արևմտահայերենի ուղղագրական մի բառարանում հարցին ձևային առումով ուշագրավ լուծում է տրվել. եբրայ(եց)երեն ձևի միջոցով ներկայացվում են երկու տարբերակներն էլ: Մյուս հիմքով կազմվածներից տրվել են հրէարէն և հրէերէն տարբերակները²⁴: Սրանք են եղել այդ ժամանակաշրջանի արևմտահայերենում առավել գործածականները:

Թարգմանական բառարաններ

Հետևենք հայերենի թարգմանական բառարաններում հրեաների լեզվի անունների և դրանց տարբերակների բառարանային մշակման ընթացքին:

Ա. Հայերեն-լատիներեն: 1621 թ. Միլանում տպագրված հայերեն առաջին տպագիր՝ Ֆ. Ռիվոլայի հայ-լատիներեն բառարանում, տեղ է գտել եբրայերեն-ի ուղղագրական մի տարբերակը, որ ե-է-ի շփոթի հետևանքով առաջացած սխալագրության հետևանք է՝ էբրաէրէն (Lingua Hebraica)²⁵: Նշելի են հետևյալ իրողությունները՝ ա) սա հայերեն տպագիր բառարանում հրեական լեզվի անվան առաջին գրանցումն է, բ) բառացանկում տեղ է գտել լեզվանվան կրճատ տարբերակը, որ XVII դարի սկզբներին նրա գոյության ցուցիչ է:

Բ. Հայերեն-անգլերեն: Այս տեսակի բառարաններում քննարկվող լեզվանունը հայտնվել է XIX դարի երրորդ տասնամյակում. հ. Հարություն Ավգերյանի՝ հայերեն-անգլերեն առաջին նշանակալից բառարանում մակբայի արժեքով գրանցվել են եբրայեցերէն-ը (in hebrew, in the hebrew language) և հրէարէն-ը (Jewishly, նմուշային բառակապակցություններում՝ Hebrew)²⁶: Այս բառարանի վրա է հենվել Մատթիա վրդ. Պետրոսյանը, բայց որոշ չափով տարբեր մոտեցում դրսևորել. եբրայեցերէն-ը կրկին մակբայի արժեքով է (in hebrew, in the hebrew language), այնինչ հրէարէն-ը՝ մակբայի (in hebrew) և ածականի (հրէական-ին հղելով)²⁷:

²² Ղարիբյան, Շեկյան 1981, 74:

²³ Հմմտ. Սուքիասյան, Սուքիասյան 2002, 83, 211, Նազարյան, Գյոդակյան 2004, 118, 278 և այլն:

²⁴ Աբեղեան 1947, 119, 173:

²⁵ Rivola 1621, 100:

²⁶ Աւգերեան, Պրէնտեան 1825, 177, 377: Այս և հետագա բառարաններում անգլերեն լեզվանունների մեծատառ թե փոքրատառ գրությունը խայտաբղետ է:

²⁷ Պետրոսեան 1875–79, 423:

Գլուխիչյան Դ.

XX դարի սկզբի մի բառարանում արձանագրված են եբրայեցերէն (ած. և գոյ.՝ Hebrew: the Hebrew language) և հրէարէն (գոյական՝ the Hebrew language), որից հղվում է առաջինին²⁸: Նույն շրջանում լույս տեսած մեկ այլ բառարանի նույն բառահոդվածում որպես գոյական և ածական ներկայացված են եբրայերէն, եբրայեցերէն (Hebrew, the Hebrew language), ապա նաև հրէարէն (the jewish, hebrew language)²⁹, որից հղում է արվում եբրայեցերէնին, թեև բառահոդվածում ըստ այբբենական կարգի եբրայերէն-ն է առաջին միավորը: Բառարանագիրն այսպես թերևս ցույց է տվել իր նախապատվությունը:

Մ. Գույումճյանի բառարանը հաջորդական բառահոդվածներով ներկայացնում է եբրայերէն-ը գոյականի արժեքով (the hebrew language, in the hebrew language, in hebrew) և եբրայեցերէն-ը՝ ածականի (Hebraistical, in hebrew), ապա նաև հրէարէն-ը (the jewish, Hebrew language)՝ գոյականի³⁰: Խոսքիմասային արժեքներով եբրայերէն-ի և եբրայեցերէն-ի նման տարբերակումը հիմնավորված չէ: Սրանց տարբերությունը միայն –աց(ի) ածանցի առկայությունը կամ բացակայությունն է, իմաստները և ձևաբանական արժեքները նույնն են:

Մեկ այլ բառարանում տրված են հրէերէն, որի կողքին՝ փակագծերում՝ եբրայերէն - Hebrew (language) և առանձին բառահոդվածով՝ եբրայեցերէն - Hebrew³¹:

Արևելահայերեն-անգլերեն բառարանում գրանցվել են միայն եբրայերեն-ը (գոյ. և մկբ. արժեքներով) և հրեերեն տարբերակները. վերջինից հղում է արվում եբրայերեն-ին³²: Եբրայեցերեն-ը և ուրիշ տարբերակներ չկան: Հատկապես հայաստանյան թարգմանական բառարաններին ավելի բնորոշ է տարբերակայնության բացառումը կամ նվազագույնին հասցնելը:

Ինչպես տեսանք, հրեաների լեզվի անունը հայերեն-անգլերեն բառարաններում ներկայացվել է տարբերակային տարբեր զուգակցումներով, պատկերը բավական խայտաբղետ է:

Գ. Հայ-իտալերեն: Մանուել վարդապետ Ջախջախյանի հայ-իտալերեն բառարանում, որ լույս է տեսել ՆՀԲ-ի հետ գրեթե միաժամանակ, մակբայի

²⁸ Մինասեան 1902, 115, 277:

²⁹ Փափագեան 1905, 275, 117:

³⁰ Գույումճեան 1950, 164, 444: Բառարանի կրճատված և խմբագրված տարբերակում կա միայն եբրայերեն-ը, չկան ո՛չ եբրայեցերեն-ը, ո՛չ էլ հրեերեն-ը կամ այլ տարբերակներ (Գույումճեան 2002, 67):

³¹ Խնդրունի, Գուշագճեան 1970, 92, 232:

³² Բարաթյան 2002, 154, 361:

Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների...

արժեքով գրանցվել են եբրայեցերէն-ը, ինչպես նաև հրէարեն-ը, հրէերէն-ը և հրէայերէն-ը³³: Հրէարեն-ը և հրէերէն-ը միավորված են մեկ բառահոդվածում, իբրև հավասարարժեք գլխաբառային միավորներ, իսկ առանձին տրված հրէայերէն-ից հղում է արվում հրէարեն-ին: XX դարավերջի հայերեն-իտալերեն բառարանում եբրայեցերէն-ը միարժեք է, բայց ածական է դիտվել (ebraico)³⁴, մյուս հիմքով որևէ տարբերակ չկա:

Դ. Հայ-ռուսերեն: Հայկազյան բառարանի հրատարակումից քիչ անց՝ 1838-ին, լույս տեսավ Ալ. Խուդաբաշյանի հայ-ռուսերեն բառարանը, որտեղ զետեղվել են հրեական լեզվի տարահիմք երկու անունները՝ եբրայեցերէն և հրէարեն՝ մակբայի արժեքով³⁵: Եթե եբրայեցերէն-ը թարգմանելիս գործածվել է ռուսերենի մեկ լեզվանուն (Еврейски, на Еврейскомъ языке), ապա հրէարեն-ի պարագայում՝ Иудейски, Еврейски, Жидовски, քանի որ այն սոսկ լեզվանուն չէ, այլ նշանակում է նաև «հրեաբար, հրեորեն»: Հայ-ռուսերեն բառարաններում հրէարեն-ի առաջին գրանցումն է:

Դարավերջին Կ. Յաղուբյանի հայերեն-ռուսերեն բառարանում կրկին զետեղվել են եբրայեցերէն-ը և հրէարեն-ը: Եթե առաջինը սոսկ թարգմանվել է еврейскій (առանց ձևաբանական արժեք նշելու), ապա հրէարեն-ը տրվել է երեք արժեքով՝ ա. еврейскій, մ. по еврейски, գ. еврейскій язык³⁶, առանց այլ բառերի ներգրավման (ինչպես Խուդաբաշյանցի բառարանում է):

Հայ-ռուսերեն ակադեմիական բառարանում տարբերակային լեզվանունները միևնույն բառահոդվածում տրված են զույգերով՝ եբրայերեն / եբրայեցերեն, հրեաերեն / հրեերեն (հղված են եբրայեցերեն-ին)³⁷: Եբրայերեն / եբրայեցերեն-ը ներկայացված են ձևաբանական հետևյալ արժեքներով և թարգմանությամբ՝ 1. գոյ. иврит, 2. ած. древнееврейский язык (о языке), 3. մկր. на иврите: Լեզվի հին և նոր գոյավիճակներն անվանող ռուսերեն բառերի նման բաշխումն անհասկանալի է, բայց սա ուրիշ խնդիր է:

Ե. Հայերեն-ֆրանսերեն բառարաններ: Նախանցյալ դարի երկրորդ կեսին Ա. Գալֆայեանի հայերեն-ֆրանսերեն բառարանում զետեղված են թե՛ եբրայեցերեն և թե՛ հրէարեն լեզվանունները. եբրայեցերէն-ը՝ մակբայի (en hébreu) և գոյականի (l'hébreu, la langue hébraïque), իսկ հրէարեն-ը՝ մակբայի

³³ Զախչախեան 1837, 435, 905:

³⁴ Օհանեան 1999, 123:

³⁵ Խուդաբաշյան 1838, հ. 1, 339, հ. 2, 84–85:

³⁶ Եաղուբեան 1891, 7, 250:

³⁷ Հայ-ռուսերեն բառարան 1987, 201, 432:

Գյուրջիյան Դ.

(en hébreu) և ածականի («հրեական» իմաստով)³⁸: Դարավերջին Ե. Տեմիրճի-պաշյանն իր բառարանում զետեղել է եբրայեցերէն և հրէարէն բառերը՝ նույն hébreu թարգմանությամբ³⁹: Իսկ ահա անցյալ դարի առաջին կեսին Մ. Հովհաննեսյանի բառարանում մակբայի և գոյականի արժեքներով միայն եբրայեցերէն-ն է զետեղվել՝ en hébreu, l'hébreu թարգմանությամբ⁴⁰: Նշված բառարանները ստեղծվել են արևմտահայ իրականության մեջ, և ինչպես տեսանք, շրջանառվել են լեզվանվան երկու տարբերակներ՝ եբրայեցերէն և հրէարէն: Հրէայ հիմքով մյուս տարբերակները, որ գրանցված են գրաբարի բառարաններում, բառացանկ չեն ներառվել:

Արևելահայ իրականության մեջ պատկերը տարբեր է, հատկապես հրեարեն-ի առումով, որը չի հանդիպում: Անցյալ դարավերջի բառարաններից մեկը ներկայացնում է միայն եբրայերեն (yiddish, hébreu)⁴¹ տարբերակը, այս դարի հայերեն-ֆրանսերեն բառարանում, ի տարբերություն արևմտահայերենի բառարանների, գրանցվել են եբրայերեն և հրեերեն տարբերակները. վերջինից հղում է արվում եբրայերեն-ին⁴²:

2. Հայերեն-հունարեն: XIX դարի երկրորդ կեսին տպված բառարանում գրանցվել են եբրայեցերէն և հրէարէն / հրէէրէն (-երէն-ը՝ է սկզբնատառով. սա բառարանից բառարան կրկնվող վրիպակ է) լեզվանունները⁴³:

Է. Հայերեն-թուրքերեն: XX դարասկզբին լույս տեսած ընդարձակ բառարանում եբրայեցերէն լեզվանունը չի թարգմանվել, այլ հղում է տրվել եբրայական լեզու բառակապակցությանը (այս մոտեցումը մնում է եզակի), իսկ մյուս հիմքից կազմված հրէարէն-ը և հրէերէն-ը նույն բառահոդվածի հավասարարժեք գլխաբառեր են⁴⁴: Վերջերս լույս տեսած բառարանում տեղ է գտել միայն եբրայերեն-ը (գոյականի արժեքով)⁴⁵:

Ը. Հայերեն-գերմաներեն: Անցյալ դարակեսին Տ. Ֆրունճյանի բառարանում յուրաքանչյուր հիմքից կազմված մեկ բառ է ներառված՝ եբրայերեն-ը (Hebräisch, տպված է եչով՝ նոր ուղղագրությամբ) և հրէերէն (Jüdisch,

³⁸ Գալֆայեան 1861, 234, 580: Նույն մոտեցումը նաև այստեղ՝ Լուսինեան-Բասմաջեան 1915, 195, 453:

³⁹ Տեմիրճիպաշեան 2003, 51, 159 (Ա հրատ.՝ 1894, Կ. Պոլիս):

⁴⁰ Յովհաննէսեան 1925, 178: Հմմտ. նաև Պայեան 1926, 659:

⁴¹ Գասպարյան 1999, 95:

⁴² Բարլեզիզյան 2009, 271, 590:

⁴³ Զօլազեան 1868, 63, 165:

⁴⁴ Կարապետեան 1907, 271, 520:

⁴⁵ Դերմենջյան 2013, 110:

Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների...

Hebräisch)⁴⁶: Լ. Թորոսյանի հայերեն-գերմաներեն բառարանում տեսնում ենք Արտ. Աբեղյանի կիրառած հնարը, երբ մեկ ձևի մեջ ներկայացվում են եբրայեցի հիմքով կազմված թե՛ ավանդական և թե՛ այժմյան տարբերակները՝ եբրայե(ցե)րեն: Սա և հրէերէն/հրեերեն-ը թարգմանվել են նույն բառով՝ Hebräisch⁴⁷:

Թ. Հայերեն-արաբերեն: Արձանագրվել է միայն եբրայեցերէն-ը⁴⁸, որը արևմտահայ ավանդույթի շրջանակում է:

Ժ. Հայերեն-պարսկերեն: Վ. Հարությունյանի հայերեն-պարսկերեն թեհրանյան բառարանում յուրաքանչյուր հիմքից զետեղված է մեկ բառ՝ եբրայեցերէն և հրէերէն⁴⁹: Հայերեն-պարսկերեն երևանյան բառարանում հրեաների լեզվի միայն մեկ անուն կա՝ եբրայերեն սեղմ տարբերակը՝ ձևաբանական երեք արժեքների մատնանշումով⁵⁰:

ԺԱ. Հայերեն-իսպաներեն: Հայերեն-իսպաներեն բառարանում երեք արժեքով արձանագրված է միայն եբրայեցերէն-ը (lengua hebraica)⁵¹: Լեզվանվան կանոնարկման հասնելու ուղիներից մեկը տարբերակների բազմությունից հրաժարվելն է, և մեկ տարբերակի ընտրությունը դրական քայլ է:

ԺԲ. Հայ-ադրբեջաներեն: Հայաստանյան բառարանագրության մեջ տարբերակայնությունը մինչ այդ չկիրառված լուծում է տրված հայ-ադրբեջաներեն բառարանում՝ **եբրայե(ցե)րեն** (ինչպես տեսանք, սփյուռքում կիրառվել է XX դարի առաջին կեսին), իսկ **հրեա** հիմքով միայն **հրեաերեն**-ն է տրված⁵²: Ընտրվել է արևելահայերենին ոչ այնքան բնորոշ հրեաերեն տարբերակը, այն էլ սխալագրությամբ (առանց յ-ի), որ պատահում է նաև այլուր:

Անդրադառնանք հանրագիտական բառարաններին: Հայկական Սովետական Հանրագիտարանում գլխաբառ են դարձել տարբեր հիմքերից կազմված երեք բառեր՝ եբրայերեն (այս իրողությունը նշանակում է, որ եբրայեցերեն-ը հետ է մղվել), իվրիտերեն (իվրիտ-ից –երեն ածանցի միջոցով «հայերենացված» այս լեզվանունը մնաց հիմնականում հանրագիտարանի շրջանա-

⁴⁶ Froundjian 1952, 132:

⁴⁷ Թորոսեան 2019, 182, 427:

⁴⁸ Թազպազեան 1964, 166:

⁴⁹ Յարութինեան 2006, 210, 401 (առաջին հրատարակությունը՝ 1972-ին):

⁵⁰ Դավթյան 2011, 89:

⁵¹ Թէքէեան 1984, 180:

⁵² Բաղդամյան, Խալիլով 1978, 121, 351:

Գյուրջինյան Դ.

կում) և հրեներեն (հղվում է եբրայերեն-ին)⁵³: Վերջերս լույս տեսած «Հանրագիտական բառարանում» հիմնական գլխաբառ է դարձել եբրայերեն-ը (բացատրվում է որպես հին հրեներեն), իվրիտերեն-ի փոխարեն անաժանց տարբերակն է՝ իվրիտ (մի տեղ ասվում է «Իսրայելի պետական լեզուն», մեկ այլ տեղում՝ լեզուներից մեկը), հրեներեն-ը կրկին հղվում է եբրայերեն-ին⁵⁴:

Ամփոփ ներկայացնենք, թե հրեաների լեզվի անունը բառային ի՞նչ միավորներով և տարբերակների ինչպիսի՞ զուգակցումներով է ներկայացվել հայերենի տարատեսակ բառարաններում:

Բառարանների մեծ մասում ներառված են և՛ եբրայեցի, և՛ հրեայ (հրեա) բառերից կազմված միավորները: Հանդիպում են տարատեսակ զուգակցումներ՝ ա. եբրայեցերէն, հրէարէն, հրէերէն և հրէայերէն, բ. եբրայեցերէն և հրէարէն, գ. եբրայեցերէն, եբրայերէն և հրէարէն, դ. հրէերէն (եբրայերէն) և եբրայեցերէն, ե. եբրայերէն և հրեներեն, զ. եբրայեցերէն, եբրայերեն, հրեաներեն և հրեներեն, է. հրէարեն և հրէերէն և այլն: Բառարաններում առանձնաբար, առանց տարբերակի են տրված ավելի շատ եբրայեցերէն-ը, այնուհետև՝ եբրայերեն-ը և մեկ անգամ՝ հրեներեն-ը:

Տարդ ներկայացրինք «հրեաների լեզու» նշանակող բառերի բառարանագրական մշակման ընդհանուր պատկերը: Հարկ է նշել, որ կան բառարաններ, որոնց բառացանկում սպասելի էր հրեաների հին կամ նոր լեզվի անունը, սակայն այն բացակայում է: Այսպես, հայ-ռուսերեն 40 հազար բառ պարունակող բառարանում, օրինակ, կան նույնահիմք եբրայագետ, եբրայագիտություն, եբրայական, եբրայեցի, եբրայուհի բառերը մի կողմից և հրեա, հրեական, հրեակեր, հրեասեր, հրեատյաց՝ մյուս կողմից⁵⁵, սակայն հրեաների լեզվի անվան որևէ տարբերակ չկա: Կամ մի բառարանի հայերեն-անգլերեն ցանկում կան Լատվիայի լեզվի անվան երկու տարբերակ՝ լատիշերեն և լատվիերեն⁵⁶, բայց հրեաների լեզվի անունը չկա: Չենք կարող ասել, թե լատիշերեն-ը և լատվիերեն-ը ավելի հաճախադեպ են: Նույն կերպ էլ հայերեն-գերմաներեն բառարանում կա արամերեն լեզվանունը⁵⁷, բայց հրաների լեզվի անվան որևէ տարբերակ չկա: Տարբերակայնությունից խուսափելու հնա՛ր է,

⁵³ Հայկական Սովետական Հանրագիտարան հ. 3, 1977, 465, հ. 4, 1978, 424, հ. 6, 1980, 628:

⁵⁴ Հանրագիտական բառարան հ. 1, 2016, 635, 876, հ. 2, 2018, 228:

⁵⁵ Ղարիբյան, Տեր-Մինասյան, Գևորգյան 1960, 122:

⁵⁶ Սեֆերյան և ուրիշներ 2009, 492:

⁵⁷ Գաբրիելյան և ուրիշներ 2000, 56:

Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների...

թե՞ բառեր ընտրելիս համակարգայնությունը չպահպանելու կամ անուշադրության հետևանք, դժվար է ասել: Առհասարակ հազվադեպ է պատահում, որ հայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններում ընդգրկված չլինեն հրեական լեզվի անուն(ներ)ը, բացառությամբ, իհարկե, սահմանափակ բառային կազմ ունեցողները:

Եզրակացություններ

Հայ բառարանագրության մեջ հրեաների լեզվի անվան առաջին արձանագրումը, թեպետ սխալագրությամբ (Էբրաէրէն - Lingua Hebraica), կատարվել է Ֆ. Ռիվոլայի հայերեն-լատիներեն բառարանում (1621 թ.): Միալեզվյան բառարաններից առաջին անգամ Մխիթար Սեբաստացու Հայկազյան բառարանում (1749 թ.) գրանցվել են հրեաների լեզվի հրէարեն և հրէէրեն (կրկին սխալագրությամբ) տարբերակային անունները:

Հայերենի բառարաններում առավել հաճախ արձանագրվել են հետևյալ լեզվանունները՝ եբրայեցերեն / եբրայեցերեն, եբրայերեն, հրէարեն (առավելաբար արևմտահայերենի բառարաններում), հրեերեն (հիմնականում արևելահայերենի բառարաններում):

Լեզվանունները բառարաններում ներկայացվել են երեք արժեքով. նախ՝ մակբայի, ապա՝ ածականի, հետո նաև գոյականի արժեքներով: Որոշ բառարաններում հրեաների լեզվի անունները մենարժեք են, մի մասում՝ երկարժեք, արդի բառարաններում՝ մեծ մասամբ եռարժեք:

Միևնույն բառարանում պատահում են հրեաների լեզվի նույնահիմք և տարահիմք անունների ու դրանց տարբերակների տարատեսակ զուգակցումներ՝ եբրայեցերեն, եբրայերեն, հրեաերեն, հրեերեն և այլն:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական, մասնագիտական (լեզվաբանական) բառարաններում հարկավոր է հստակեցնել հրեաների լեզվի, Իսրայելի պաշտոնական լեզվի անուն(ներ)ը և բացատրությունը, հրաժարվել գործածությունից դուրս մղված տարբերակների ներմուծումից բառարանների ցանկեր: Մեր կարծիքով դա պետք է լինի եբրայերեն-ը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբեղեան Ա. 1947, Ուղղագրական բառարան հայերեն լեզուի, Շտուտգարտ, «Մաշտոց» տպարան, 260 էջ:

Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1642 էջ:

Գյուրջինյան Դ.

Աղայան Էդ. 2014, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, «Մանմար», Երևան, 1328 էջ:

Աղաջանյան Ջ. 2017, Արդի հայերենի իմաստաարժեքային զուգաձևությունների բառաքերականական բառարան, Երևան, «Նաիրի», 536 էջ:

Աճառյան Հ. 1955, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն հատոր, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 656 էջ:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի 1865, Բ տպ., Վենետիկ, Սուրբ Ղազար, 850 էջ:

Բաղդամյան Ռ., Խալիլով Ի. 1978, Հայ-ադրբեջաներեն բառարան, Երևան, «Լույս», 566 էջ:

Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ 1869, Վենետիկ, Սուրբ Ղազար, 580 էջ:

Բարաթյան Ն. 2002, Հայերեն-անգլերեն բառարան, Երևան, «Մակմիլան-Արմենիա», 592 էջ:

Բարլեզիզյան Ա. 2009, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 976 էջ:

Բարսեղյան Հովհ. 1973, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երևան, «Լույս», 980 էջ:

Գաբամաճեան Ա. 1910, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, Տպագրութիւն Ռ. Սագաեան, 1406 էջ:

Գաբրիելյան Յ. և ուրիշներ 2000, Հայ-գերմաներեն բառարան, Köln, Bundesverwaltung-gesamt, 400 էջ:

Գալֆայեան Ա. 1861, Բառգիրք հայ-գաղղիարէն եւ գաղղիարէն հայերէն, Փարիզ, Գրավաճառանոց Լ. Հաշեթի, 1060 էջ:

Գասպարյան Ս. 1999, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, «Արեգ», 400 էջ:

Գնէլ արք. Ճէրէճեան, Տօնիկեան Փ.Կ. 1992, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Պէյրութ, «Կ. Տօնիկեան եւ Որդիք» հրատ., 1306 էջ:

Գույումճեան Մ. 1950, Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Գահիրէ, Տպարան «Սահակ-Մեսրոպ» 1154 էջ:

Գույումճեան Մ.Կ. 2002, Գրպանի Նոր Բառարան Հայերէն-Անգլերէն, այժմէականացուց Լ. Թորոսեան, Պէյրութ, «Շիրակ», էջ 315:

Դավթյան Տ. 2011, Հայերեն-պարսկերեն բառարան, Երևան, «Անկյունաքար», 452 էջ:

Դերմենջյան Մ. 2013, Հայերեն-թուրքերեն բառարան, Երևան, Հեղ. հրատ., 400 էջ:

Եաղուբեան Կ. 1891, Հայերէն-ռուսերէն բառարան, Թիֆլիս, Տպարան Յ. Մարտիրոսեանցի, 464 էջ:

Թազպազեան Ժ. 1964, Բառարան հայերէնէ արաբերէն, Պէյրութ, Տպարան «Մշակ», 828 էջ:

Թորոսեան Լ. 2019, Ընդարձակ բառարան Հայերէնէ-Գերմաներէն, Վիեննա, 765 էջ:
Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ, 602 էջ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1972, հ. 2 (կազմեց Վ. Առաքելյանը), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 716 էջ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974, հ. 3, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 575 էջ:

Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների...

Լուսինեան Գ., Բասմաջեան Կ. 1915, Առձեռն բառարան հայերէն աշխարհիկ լեզուէ ֆրանսերէն, Կ. Պոլիս, Պ. Պալենց եւ Օ. Արզուման, 846 էջ:

Խողաբաշեանց Ալ. 1838, Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ, Մոսկուա, հ. 1, 616 էջ, հ. 2, տպ. Լազարեան ճեմարան, 533 էջ:

Կարապետեան Պ.Զ. 1907, Մեծ բառարան հայերէնէ օսմաներէն, Կ. Պոլիս, Տպագրութիւն Վ եւ Հ. Ներսէսեան, 930 էջ:

Հ. Գաբրիէլ Աւետիքեան, հ. Խաչատուր Սիրմէլեան, հ. Մկրտիչ Ազերեան 1836, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1140 էջ, 1837, հ. Բ, 1068 էջ:

Հ. Գէորգ Պայեան 1926, Բառարան հայերէն-գաղղիերէն, Վենետիկ, Սուրբ Ղազար, Մխիթարեան տպարան, 2311 էջ:

Հ. Յ. Ազերեան, Պրէնտեան Հովհ. 1825, Բառարան հայերէն եւ անգլիական, հ. Բ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 640 էջ:

Հ. Յարութիւն Թէքեան 1984, Բառարան Հայերէն-Սպաներէն, Բուենոս Այրես, «Ակիան», 868 էջ:

Հ. Վահան վրդ. Օհանեան 1999, Բառարան հայերէն-իտալերէն, Վենետիկ, Մխիթարեան հրատարակչատուն, 498 էջ:

Հայկական Սովետական Հանրագիտարան 1977, հ. 3, Երևան, Հայկական Սովետական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, հ. 4, 1978, հ. 6, 1980, 720 էջ:

Հայոց լեզվի հանգաբառարան 1976, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 655 էջ:

Հայ-ռուսերէն բառարան 1987, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 736 էջ:

Հանրագիտական բառարան 2016, հ. 1, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 1120 էջ:

Հանրագիտական բառարան 2018, հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 1144 էջ:

Հարությունյանց Մ. 1963, Հայ-ռուսերէն լեզվաբանական բառարան, Երևան, Գիտատեխնիկական ընկերությունների հայկական ռեսպուբլիկական խորհուրդ, 308 էջ:

Ղազարյան Ռ. 2000, Գրաբարի բառարան, հ. Ա, Երևան, Երևանի համալս. հրատ., 685:

Ղարիբյան Ա., Շեկյան Գ. 1981, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, «Լույս», 272 էջ:

Ղարիբյան Ա., Պարիս Գ. 1959, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, Հայպետուսմանկիրատ, 256 էջ:

Ղարիբյան Ա.Ս., Տեր-Մինասյան Ե.Գ., Գևորգյան Մ.Ա. 1960, Հայ-ռուսերէն բառարան, Երևան, Հայաստանի պետական հրատարակչություն, 442 էջ:

Ճիգմէճեան Պ. վրդ. 1957, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 2, Հալէպ, Տպարան «Անի», 1460 էջ:

Մալխասյանց Ստ. 1944, հ. 1, Հայերէն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ պետական հրատ., Երևան, 608 էջ, 1944, հ. 3, 614 էջ, 1945, հ. 4, 647 էջ:

Գյուրջինյան Դ.

- Մանուել վրդ. Զախջախեան** 1837, Բաղդիք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, Տպարան Սրբոյն Ղազարու, 1535 էջ:
- Մատաթիա վրդ. Պետրոսեան** 1875–79, Նոր բաղդիք հայ-անգլիարէն, Վենետիկ, Սուրբ Ղազար, 817 էջ:
- Մինասեան Մ.Գ.** 1902, Առձեռն բառարան հայերէն-անգլիերէն, Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 506 էջ:
- Մխիթար Սեբաստացի** 1749, Բաղդիք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1251 էջ:
- Յարութիւնեան Վ.** 2006, Հայերէնից պարսկերէն բառարան, Թեհրան, «Նայիրի», 686 էջ:
- Յովհաննէսեան Մ.** 1925, Բառարան հայերէն-ֆրանսերէն, Կ. Պոլիս, Libraire-editeur B. Zartarian, 1128 էջ:
- Նազարյան Ռ., Գյողալյան Ա.** 2004, Հայերէն ուղղագրական դպրոցական բառարան, Երևան, «Զանգակ», 520 էջ:
- Չօլազեան Տ. Ի. Խ.** 1868, Նոր բառարան հայերէնէ ի յունարէն, Կոստանդնուպոլիս, Տպագրութիւն Ռ. Յ. Քիւրքեան, 359 էջ:
- Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարապետյան Թ.** 1975, Լեզվաբանական բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 318 էջ:
- Սեֆերյան Ա.** և ուրիշներ 2009, Անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն բառարան, Երևան, «Արեգ», 750 էջ:
- Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք.** 2002, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Երևան, «Մակմիլան Արմենիա», 410 էջ:
- Վեր. Տիգրան Խնդրունի, Մ. Գուշագճեան** 1970, Հայերէն-Անգլերէն Արդի Բառարան, Պէյրութ, «Կ. Տօնիկեան եւ Որդիք», 432 էջ:
- Տեմիրճիպաշեան Ե.** 2003, Գրպանի բառարան հայերէնէ գաղղիերէն, Ե տպ., Պէյրութ, «Կ. Տօնիկեան եւ Որդիք», 379 էջ:
- Փափազեան Չ. Տ. Ս.** 1905, Գործնական Բառարան Հայերէն-Անգլիերէն, Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, Կ. Պոլիս, 508 էջ:
- Froundjian D.** 1952, Armenisch-Deutsches Wörterbuch, München, «R. Oldenbourg», 522 էջ:
- Rivola F.** 1621, Dictionarium Armeno-Latinum, Միլան, Ամբրոսյան դպրոցի տպարան, 406 էջ:

ИСТОРИЯ ЛЕКСИКОГРАФИЧЕСКОЙ ОБРАБОТКИ АРМЯНСКИХ НАЗВАНИЙ ЕВРЕЙСКОГО ЯЗЫКА И ИХ ВАРИАНТОВ

ГЮРДЖИНЯН Д.

Резюме

Ключевые слова: название языка, семитские языки, иврит, орфографические варианты, лексикографическая традиция, канонизация, древнеармянский язык.

Армянское название еврейского языка (с неправильным написанием: էրրաշէրէն) впервые было зарегистрировано в армяно-латинском словаре Ф. Риволы (1621 г.). Словарь древнеармянского языка Мхитара Себасти (1749 г.) является первым моновязычным словарем, где были зафиксированы варианты названия еврейского языка հրէաշերեն и հրէէրէն.

В словарях армянского языка чаще всего упоминались следующие названия еврейского языка: էրրաշէրէն / էրրաշէրեն, էրրաշերէն / էրրաշերեն, притом հրէաշէրէն – в основном в словарях западноармянского языка, а հրենէն – в словарях восточноармянского. В современных словарях эти названия представлены в основном в трех морфологических значениях.

В толковых словарях современного армянского языка необходимо уточнить название (или названия) еврейского языка, официального языка Израиля, и их толкование, а также отказаться от внесения в словники вышедших из употребления вариантов.

HISTORY OF THE LEXICOGRAPHIC INTERPRETATION OF ARMENIAN NAMES OF THE LANGUAGE OF JEWS AND THEIR VARIANTS

GYURJINYAN D.

Summary

Keywords: language name, Semitic languages, Hebrew, the Jewish language, orthographic variants, lexicographic tradition, standardization.

The printed dictionary, in which the Armenian name of the Hebrew language was registered for the first time (with a wrong spelling: էբրաէրէն), was the Armenian-Latin dictionary by F. Rivola (1621). Old Armenian dictionary by Mkhitar Sebastatsi (1749) was the first monolingual dictionary where the different variants of the Hebrew language name (հրէարեն and հրէէրէն) were recorded.

In dictionaries of the Armenian language the following names of Hebrew were most often referred to: եբրայեցերէն / եբրայեցերեն, եբրայերէն / եբրայերեն, while հրէարէն was mostly in Western Armenian, and հրեերեն in Eastern Armenian dictionaries. In modern dictionaries, these names are mainly represented by three morphological meanings.

It is of utmost importance to clarify the name (or names) of the Hebrew, the official language of Israel, as well as its interpretation, and leave out the obsolete variants from dictionaries of Modern Armenian.